

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԻ ԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Կ. Ն. ՅՈՒՋԲԱՇՅԱՆ (Լենինգրադ)

Հայագիտության ազանավոր ներկայացուցիչներից մեկը՝ Նիկողայոս Ադոնցը ծնվել է այժմյան Սիսիանի շրջանի Բոնակով գյուղում, 1871 թ. հունվարի 10 (22)-ին¹։ Իր ընտանիքի ծննդագրությունը Ադոնցը հասցնում էր մինչև 'Կավիթ-բեկի' գինակից Տեր-Ավետիքը։ Մասնով Նիկողայոսը սովորում է նախ Տաթևի ծխական դպրոցում, ապա Եկվորդյան ճեմարանում։ 1892 թ. նա ընդունվում է Ռիֆլիսի ռուսական II գիմնազիան, որը և ավարտում է 1894 թ.։ Նույն տարին ընդունվում է Պետերբուրգի համալսարանի Պատմա-բանասիրական բաժանմունքը, որտեղից շուտով տեղափոխվում է Իրավաբանական լաժինը։ Միաժամանակ նա Արևելյան լեզուների բաժանմունքում ունկնդրում է Ն. Մառին (հայոց լեզու), Ս. Ֆ. Օլգենրուդին (սանսկրիտ), Ն. Ի. Վեսելովսկուն (Արևելքի պատմություն)։ Ադոնցը, սակայն, համալսարանում երկար չի մնում, սովորում է մի եռամսյակ և հեռանում։ 1895 թ. աշնանը նա նորից է ընդունվում Պետերբուրգի համալսարանը և հաճախում երկու բաժանմունքների՝ Պատմա-բանասիրական (գրականության ճյուղ) և Արևելյան (սանսկրիտ-պարսկա-հայոց ճյուղ) դասերին։ Ադոնցի անմիջական ղեկավարն էր Նիկողայոս Մառը, որն այդ տարիներին ամբողջությամբ զբաղված



¹ Գրականության մեջ ամենուրեք կրկնվում է այն սխալը, որ Ադոնցը ծնվել է 1875 թ.։ Մինչդեռ պահպանվել է Երևանի կոնսիստորիայի վկայականը, որը տրվել է «ի հետևումն խնդրու ընակչի Բոնակով գեղջ Զանգեագորայ գաւառի Նիկողայոսի Տէր-Աւետիքեան Ադոնց յայն, գիւյօրինաւոր ամուսնութենէ Գլորգայ Առաքելեան Ադոնց ընդ Դանայի Ռուստամեան ծնեալ է ուստի ի տասներորդ աւուր ամսեանն յունվարի հազար ութ հարիւր եօթանասուն ու մի ամի...» (ГИАЛО, ф. 14, оп. 1, № 9732, л. 10)։ Պետք է ասել, որ Ադոնցի շուտ վաճառված ծննդյան թիվը հաճախ սխալ է նշված։

Հոգվածում ընդունված համառոտագրությունների ցանկը տրվում է հոգվածի վերջում։ 1947 թ. Ն. Ալիևյանը հրատարակեց Ն. Ադոնցի աշխատությունների լրիվ իրագրաֆիան (ՀԱ, 1947, էջ 311-316), ուստի ներկա հոգվածում հարկ համարեցինք Ադոնցի արտատպված երկերը վկայակոչել միայն վերջին հրատարակությամբ։

էր հայ-վրացական բանասիրութեամբ, բազմաթիւ աշխատութիւններում ձգտում էր ցույց տալ հայ և վրաց մշակութիւնների ինքնուրույն արժեքն ու նշանակութիւնը և իրեն հատուկ կրթով բնակացնում էր այդ մտքին նաև իր աշակերտներին: Համալսարանի Պատմա-բանասիրական բաժանմունքը, բացի ընդհանուր առարկաներից, Աղոնցին տվեց հին լեզուների, հատկապես հունարենի և լատինարենի, հիմնավոր գիտելիքներ: 1899 թ. նա ավարտում է համալսարանը՝ ավարտական քննութիւններ հանձնելով Արևելյան բաժանմունքում: Որպես ավարտական աշխատանք նա ներկայացրել էր հայոց Հայսմափութներին նվիրված մի ուսումնասիրութիւն, որի վրա աշխատել էր տարիներ և ձեռագրերին ծանոթանալու նպատակով իր արձակուրդները անց կացրել Վիեննայի ու Վենետիկի Մխիթարյանների մոտ: Այդ աշխատութիւնը արժանացավ ոսկե պարգևանշանի, առաջարկված էր այն տպագրել համալսարանի հաշվին: Բայց այդ տարիներին աշխատութիւնը այնպես էլ լույս չտեսավ: Շատ ժամանակ անց հեղինակը վերամշակեց իր գործը և հրապարակեց ֆրանսերեն²:

1899 թ. օգոստոսի 20-ին Աղոնցը մեկնում է արտասահման. Մյունխենում հաճախում է բյուզանդագետ Կարլ Կրումբախերի սեմինարիումը, Փարիզում ունկնդրում բյուզանդագետ Շարլ Դիլին, ապա գնում Լոնդոն, Վենետիկ: Վերադառնալով Պետերբուրգ, նա 1902 թ. հաջող կերպով հանձնում է հայ բանասիրութեան մագիստրոսի կոչում ստանալու քննութիւնները և ամբողջութեամբ նվիրվում մագիստրոսական աշխատութեանը: Այդ նպատակով 1903 թ. դալիս է էջմիածին, միառժամանակ վրացերենի դասեր է առնում Թիֆլիսում: Այդ տարիներին խմբագրում է «Բաները զրականութեան և արվեստի» պարբերականը³: Մագիստրոսական ուսումնառութեան ժամկետը լրանում էր 1904 թ. վերջին, և թեև զրելիք աշխատութիւնը պատրաստ չէր, բայց Արևելյան բաժանմունքի բարձր կարծիքը հնարավորութիւն տվեց նրան մնալ համալսարանում՝ մինչև աշխատանքը հանձնվեց տպարան:

1908 թ. Ն. Մառի հիմնած «Тексты и разыскания по армяно-грузинской филологии» մատենաշարում լույս է տեսնում Աղոնցի մագիստրոսական դիսերտացիան «Армения в эпоху Юстиниана. Политическое состояние на основе нахарарского строя». 1909 թ. ապրիլի 5-ին կայացավ հրապարակային պաշտպանութիւնը. որպես պաշտոնական ընդդիմախոսներ հանդես եկան Ն. Մառը և նրա աշակերտ Ի. Ա. Ջավախովը (հետագայում՝ ՍՍՌՄ ԳԱ իսկական անդամ): Աղոնցը ստացավ հայ բանասիրութեան մագիստրոսի աստիճան, իսկ հուլիսի 1-ին հաստատվեց Պետերբուրգի համալսարանի պրիվատ-դոցենտ: Մտնելով համալսարանի դասախոսական կազմը, նա հնարավորութիւն ստացավ մոտիկից շփվել խոշորագույն գիտնականների հետ, որոնք կազմում էին ուսական արևելագիտութեան փառքը: Այդ տարիներին նա ամբողջությամբ նվիրվում է մի նոր աշխատութեան, որը պետք է ներկայացնէր իբրև դոկտորական դիսերտացիա: Առաջին գրքի հրատարակութիւնից հետո անցնում է հինգ-վեց տարի, և նա տպագրութեան է հանձնում այդ նոր ուսումնասիրութիւնը՝ «Дионисий Фракийский и армянские толкователи»: Գիրքը լույս է տեսնում 1915 թ. «Bibliotheca armeno-georgica» մատենաշարում, և

² N. Adontz. Les fêtes et les saints de l'Eglise Armenienne. ROC, 26 (1927-1928), էջ 74—104, 225—278 (անավարտ):

³ Լույս է տեսել ընդամենը երկու համար, 1903 և 1904 թթ.:

նույն թվի մայիսի 14-ին Աղոնցը, պաշտպանելով դիսերտացիան, ստանում է հայ բանասիրության դոկտորի գիտական աստիճան: Աղոնցի պաշտոնական ընդդիմախոսները եղել են Ն. Մառը և հելլենագետ Ս. Ա. Փեբելյովը: 1916 թ. ամառը Աղոնցը ուղևորվում է էջմիածին, Մուշ, Էրզրում, մասնակցում վանի հնագիտական արշավին: Աղոնցի՝ 1917—1919 թթ. գործունեության մասին շենք միայն կցկտուր տեղեկություններ: Հայտնի է, որ 1917 թ. նա ընտրվում է չաղարյան ճեմարանի պատվավոր հոգաբարձու: Նույն թվականին Արևելյան բաժանմունքը միաձայն ընտրում է նրան հայ և վրաց բանասիրության ամբիոնի արտահաստիքային, իսկ 1918 թ.՝ հաստիքային պրոֆեսոր: 1920 թ. Աղոնցը թողնում է Ռուսաստանը և մեկնում արտասահման:

Հաստատվելով Փարիզում, Աղոնցը 10 տարի ոչ մի պաշտոն չի վարում, ապրում է կենսական սուղ պայմաններում: Արտասահման գործուղված Ն. Մառը ստիպված է լինում նյութապես օգնել իր նախկին աշակերտին: Այդ հանդամանքները, սակայն, չեն ազդել նրա գիտական գործունեության վրա. պարբերաբար լույս տեսնող հոդվածները վկայում են գիտնականի կատարած երկարատև և լուրջ աշխատանքի մասին:

1930 թ. Բրյուսելի համալսարանին կից բացվում է արևելագիտական մի հաստատություն (հետագայում՝ Institut de Philologie et d'Histoire Orientales et Slaves): Բուլղարագետ Հանսի Գրեգուարի նախաձեռնությամբ այդ տեղ ստեղծվում է նաև հայագիտության ամբիոն, որի ղեկավար հրավիրվում է Աղոնցը⁴:

Տասնամյա ընդմիջումից հետո Աղոնցը նորից նվիրվում է դասախոսական գործունեության: Նա դասավանդում է զրաբար, աշխարհաբար, ուսանողների հետ կատարում հայ մատենագիրների ընթերցումներ: Նրա դասախոսությունների հիմնական թեման եղել է հայ-բյուզանդական հարաբերությունները: Այս շրջանում է, որ «Byzantion»-ում և այլուր լույս են տեսնում Աղոնցի արտասահմանյան շրջանի լավագույն աշխատությունները: Բելգիան գրավելուց հետո գերմանական ֆաշիստները փորձեցին Բրյուսելի համալսարանը մտցնել գերմանացի պրոֆեսորներ, սակայն տեղացիները հրաժարվեցին համագործակցել թշնամու հետ, և համալսարանը փակվեց: Դասախոսական կազմը մնաց առանց աշխատավարձի: Հուսահատ վիճակում, 1942 թ. հունվարի 27-ին Աղոնցը մահացավ: Նրա ձեռագիր ժառանգությունը տեղափոխվեց Փարիզ և հանձնվեց Հայոց օգնության կոմիտեի «Պողոս Նուբար» զրադարանին, իսկ գրքերը՝ Բրյուսելի հայ գաղութին⁵:

⁴ Annuaire, I, 1932, էջ 8:

⁵ Ն. Աղոնցի կենսագրական միակ ակնարկը գրել է Խոնդկարյանը Ֆրանսերեն (N. Adontz, Histoire d'Arménie. Des origines du Xe siècle au VIe (Av. J. C.). Paris, 1946, էջ IX—XI) և հայերեն (ՊՈԼ, էջ 9—14): Գիտնականին նվիրված մատենականում կարևոր տեղեկություններ է հաղորդում Հ. Գրեգուարը (տես N. Adontz, Histoire d'Arménie, էջ XIV—XV): Մի քանի էջ է նվիրում Աղոնցին Արշակ Չոպանյանը («Անահիտ», 1949, թ. I, էջ 40 և հաջորդ (էջակալումը խախտված է): Մ. Իշխանի հուշերը Ն. Աղոնցի մասին (հրատարակվել են Ինյուլթի «Ազգակ» պարբերականի 1944 թ. օգոստոս-սեպտեմբերի համարներում և վերահրատարակվել «Երևա մեծ հայեր» գրքում) մեծ արժեք չեն ներկայացնում: Սովետական գրականության մեջ Աղոնցի մասին տես «Советская историческая энциклопедия», т. I, 1961, стлб. 217.

* * *

Ն. Աղոնցը թողել է զիտական հարուստ ժառանգություն՝ 70-ից ավելի՝ աշխատություններ, որոնց ճնշող մեծամասնությունը հետազոտական բնույթի է։ Նրա առաջին աշխատությունը, որ նվիրված է բյուզանդական բանաստեղծուհի Կասիային⁶, տպագրվել է 1901 թ. «Հանդես Ամսօրյա»-ում։ Այդ հոդվածը դրված է բյուզանդագետ Կ. Կրումբախերի «Կասիա» վերնագրով մի հետազոտության կապակցությամբ⁷։ Ուսումնասիրելով Կասիայի էպիգրամներին մեկը, ինչպես նաև նրա այլ երկերը, Աղոնցը ցույց է տվել, որ հայերի նկատմամբ արտահայտված ատելությունը պատճառը հայոց հաղթանակի մրցությունն էր հույների հետ քաղաքական և տնտեսական կյանքում։ Նույն թվականին լույս է տեսնում Աղոնցի պոլեմիկ բնույթի կրող բնորոշակ հոդվածը, գրված Ս. Մալխասյանի մի աշխատության առթիվ։ Աշխատությունը նվիրված է այսպես կոչված «նախնական պատմությանը», որը հասել է մեզ երկու խմբագրությամբ. առաջինը պահպանվել է Սերևոսին վերագրված երկում, երկրորդը՝ Մովսես Խորենացու Պատմությունում։ Աղոնցը նախ վերացնում է գրիչների բազմաթիվ վրիպակները և ապա անցնում իր բուն գրություններին։ Փափստոսի աշխատության սկզբում եղել է մի մաս, որը շատ նման է Սերևոսի «նախնական պատմությանը», պնդում է հեղինակը։ «նախնական պատմությունից» օգտվել է Պրոկոպիոս Կեսարացին։ Այդ երկին վերագրում են ասորական ծագում, սակայն դա սխալ է, այն ծնվել է Հյուսիսային Հայաստանում։ Հոգովածում գրանցվել է հեղինակի՝ սկզբնաղբյուրները խոր վերլուծության ենթարկելու ունակությունը և մեծ էրուզիային։ Այդ շրջանի աշխատություններից է նաև «Մարգարան Վասակր պատմաբանների դատաստանի առջև» փոքրածավալ հոդվածը, որտեղ Աղոնցը առաջին փորձն է կատարել լուսաբանելու Վասակի դերը 450—451 թթ. պատերազմում՝ ելնելով նախ և առաջ մարգարանի քաղաքական դիրքավորումից։

1908 թ. լույս է տեսնում «Армения в эпоху Юстиниана» ուսումնասիրությունը, որը մի խոշոր երևույթ էր հայագիտության մեջ և հանդիսացավ հեղինակի պոլս-գործոցը։ Աշխատության առաջին մասում Աղոնցը տալիս Հայաստանի պատմա-աշխարհագրական մանրամասն նկարագիրը և պարզում հայկական հոյերի՝ Փոքր Հայքի, Ներքին Հայաստանի, անկախ իշխանությունների («սատրապությունների»), Պարսկահայքի քաղաքական սահմանները։ Նա ցույց է տալիս, թե ինչպես բյուզանդական Հայաստանը աստիճանաբար կորցնում է իր ներքին անկախությունը, այնտեղ քայքայվում են բնիկ կացութաձևերը և հաստատվում բյուզանդիային հատուկ սոցիալ-տնտեսական հարաբերությունները։ Ուսումնասիրության երկրորդ՝ առավել կարևոր վաստը՝ նվիրված է նախարարական հասարակարգին՝ «արևմուտքում ֆեոդալիզմ անվան տակ հայտնի համաշխարհային երևույթի տեղական տարատեսակին»։ Աղոնցը այստեղ պարզում է նախարարական տոհմերի թիվը, որո-

⁶ «Կասիա միսնձնուհի և հայերը», ՀԹ, 1901, էջ 129—132։

⁷ Առանձին հրատարակությամբ՝ К. Кrumbacher, Kasla, München, 1897.

⁸ Н. Адонц, „Начальная история Армении“ у Себеоса в ее отношениях к трудам Моисея Хоренского и Фауста Византийского. ВВ, VIII, 1901, էջ 61—103.

⁹ Այդ անդամները իր գրախոսականում բնորոշել էր արդեն ուրիշ բյուզանդագետ Ա. Ա. Վասիլևը, տե՛ս ЖМНП, 1910, февраль, էջ 112—118։

շում նրանց բնակության վայրերը, հանգամանորեն ուսումնասիրում նախարարական իրավակարգի հետ կապված տերմինները՝ օգտագործելով հայկական, հունա-լատինական, վրացական, պարսկական, ասորական աղբյուրները: Կանգ առնելով այսպես կոչված սեպհական իրավունքի վրա, հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես աստիճանաբար փլատակվում են նահապետական հարաբերությունները, նախարարական տոհմը տարրալուծվում է նաև տնտեսապես: Օգտագործելով աղբյուրների կցկտուր տեղեկությունները, նա փորձում է ղանազանել ֆեոդալական հողատիրության ձևերը, վերլուծության ենթարկել գյուղացիության տարբեր կատեգորիաները: Մանրամասն կանգ առնելով ֆեոդալիզմի ծագման հարցի վրա, Աղոնցը գտնում է, որ այդ կարգը ծնվում է տոհմատիրական հարաբերությունների գրկում, երբ առաջանում է անհավասարություն: «Սոցիալական հավասարակշռության համար,—գրում է նա,—վաղ շրջանում ևս նեցուկ է ծառայել համայնական հողատիրությունը: Երբ տիրության այդ ձևը խախտվում է, ծնունդ է առնում տնտեսական անհավասարություն, որը դրդում է քաղաքական իշխանության անհավասար բաշխումը» (էջ 383): Աղոնցը ոչ միայն առաջ է քաշել Հայաստանում ֆեոդալական կարգերի գոյության հարցը, այլև տվել է հայկական ֆեոդալիզմի մանրազնին վերլուծությունը: Աշխատությունը հանդիսանում է նախամարքսիստական հայ պատմագրության խոշոր երկերից մեկը¹⁰:

Շարունակելով իր պրպտումները, Աղոնցը մի փոքրիկ հոդված է գրում հայ-ծաթերի մասին¹¹, փորձում է որոշել Տորքի պաշտամունքի ծագումը¹², կարևոր ուղղում է մտցնում «Գիրք թղթոցի» մի վավերագրի մեջ¹³:

1915 թ. լույս է տեսնում Աղոնցի երկրորդ մեծ աշխատությունը՝ «Дионисий Фракийский и армянские толкователи»: Այստեղ հեղինակը հանդես է բերել բանասիրական իր լայն հնարավորությունները: Օգտագործելով շուրջ 30 ձեռագիր, նա հրատարակում է Դիոնիսիոս Թրակացու քերականության հայերեն թարգմանությունը (կցելով նրան հունարեն բնագիրը) և այդ երկի հայ վեց մեկնիչների գործերը, ընդարձակ առաջաբանում (193 էջ) խոր վերլուծության է ենթարկում վերականգնված բնագրերը, մշակում այդ տեքստերի ուսումնասիրությունն ու նրանց ժամանակագրական տեղադրումը հնարավոր դարձնող առանձին մեթոդ: Կարևոր են Աղոնցի կազմած բառացանկերը, հատկապես նրանք, որոնք ցույց են տալիս յուրաքանչյուր հեղինակի բառակազմի

¹⁰ «Армения в эпоху Юстиниана» աշխատությունը մնաց որպես եզակի մի դործ, ունի հեղինակի ձգտումները ուղղված են դիպի Հայաստանի սոցիալ-տնտեսական պատմության լուսարանում: Հետագայում նա հեռանում է այդ թեմատիկայից և միայն «Հայ հին շինականությունը» ընդարձակ հոդվածում (ՊՈԼ, էջ 157—205) մի շարք կետերում դարգացնում է իր մադիստրոսական աշխատության հիմքում դրված տեսությունները, արժարծելով գյուղացիական համայնքի, ոստանիկների, սեպհական իրավունքի հետ կապված խնդիրները և այլ հարցեր: Հատկապես հետաքրքրական են այն էջերը, ուր նա խոսում է հայ շինականների մասին: Աղոնցը գտնում է, որ շինականները պետական հողի վրա նստած գյուղացիներն են, իսկ ուսմիկ ասելով պատմիչները հասկանում են առանձին նախարարներից կախված գյուղացիներին:

¹¹ Н. Адонц, О происхождении армен-цатов, ЖМНП, 1911, апрель, էջ 238—249:

¹² Ն. Աղոնց, Տորք աստված հին հայոց. «Հուշարձան», Վիեննա, 1911, էջ 389—394, հետագայում ֆրանսերեն՝ „Tarku chez les anciens Arméniens“, REA, VII, 1927, էջ 189—194:

¹³ Н. Адонц, Амелий, епископ Херсонский (К критике армянской „Книги посланий“), ХВ, II, 1913, էջ 175—186:

նորությունները իր նախորդների համեմատությամբ: Աշխատությունը գրված է գիտական բարձր մակարդակով¹⁴: Հայ մեկնիչների բնագրերը հրատարակելիս Ադոնցը կատարել է տեքստաբանական մեծ աշխատանք. հրատարակվելիք երկերը ինքնամփոփ ձևով հայտնի չէին, նրանք պետք է քաղվեին ուրիշ հեղինակների աշխատություններից: Ադոնցը հաջողությամբ է հաղթահարել եղած դժվարությունները. բավական է ասել, որ Դավթի մեկնության վերականգնված բնագրի վավերականությունը տարիներ հետո հաստատվեց, երբ գտնվեց այդ երկի ամբողջական ձևագիր տարբերակը¹⁵: «Դիոնիսիոս Թրակացի և հայ մեկնիչները» մենագրությունը միաժամանակ ցույց տվեց, թե բանասիրական ինչպիսի նորություններ կարող է երևան բերել հույն և հայերեն բնագրերի գուգահեռ ուսումնասիրությունը: Ադոնցի աշխատությունը առաջին խոշոր գործն է հայ-հունական բանասիրության բնագավառում:

Ադոնցի գրչին են պատկանում Բրոկհաուզ-Էֆրոնի հայտնի հանրագիտարանի երկրորդ հրատարակության՝ հայոց լեզվին, գրականությանը և պատմությանը նվիրված հոդվածները¹⁶: Հայոց լեզվին հատկացված էջերում Ադոնցը մանրամասն խոսում է հայերենի ծագման մասին: Ընդունելով, որ հայերենը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին՝ որպես ինքնուրույն լեզու, հեղինակը միաժամանակ պնդում է, որ հնդեվրոպական լեզվաբանությունը ի վիճակի չէ լուծել հայերենի բոլոր հարցերը: Հետևելով իր ուսուցիչ Ն. Մառին, Ադոնցը գտնում է, որ հնդեվրոպական շերտով չի սպառվում հայերենի բառապաշարը: Հոգվածում նա գծագրում է այն փուլերը, որով անցել է հայերենը հնագույն շրջաններից մինչև նոր ժամանակները: Հայ գրականությանը նվիրված հոդվածում հեղինակն ուրվագծում է հայ միջնադարյան մատենագրության զարգացումը՝ ընդգրկելով բազմաթիվ խոշոր ու մանր գործեր, նշելով եղած հրատարակությունները և թարգմանությունները: Հատկապես հետաքրքրական են ու թարմ այն էջերը, ուր նա խոսում է հունական դպրոցի և քաղկեդոնականության մասին. այստեղ նա լիովին օգտվում է իր ինքնուրույն հետազոտությունների տվյալներից, համարձակ կերպով առաջ քաշում նոր պրոբլեմներ: Ադոնցը կարողանում է մի քանի խոսքով բնութագրել յուրաքանչյուր երկր և միաժամանակ պարզ պատկերացում տալ հայոց գրավոր անցյալի մասին: Առավել ուշագրավ է Հայաստանի պատմությանը նվիրված ակնարկը: Հայ ժողովրդի բազմադարյան անցյալը հեղինակը բաժանում է 7 շրջանի. առաջին՝ Հայաստանը հայերից առաջ: Այստեղ Ադոնցը մանրամասն կանգ է առնում Ուրարտուի պատմության վրա և նշում այն կապերը, որոնք պոլիսություն են ունեցել հայերի և ուրարտացիների միջև: Հայոց պատմության երկրորդ շրջանը, ըստ Ադոնցի, հայերի հանդես գալն է: Հեղինակը ցույց է տալիս, որ հայ ժողովրդի կորիզը կազմված է երկու էթնիկական տարրից՝ հնդեվրոպական և տեղական, ուրարտական. այստեղից են գալիս և նրա երկու անունները՝ հայ և արմեն: Երրորդ՝ Տիգրանյան շրջանի համար նա հատկանշական է համարում դասային (сословный) իրավակարգը, որին իր տեղն է

¹⁴ Տե՛ս ն. Մառի և Ս. Ժերելյովի գրախոսականները, ХВ, V, 1916:

¹⁵ Գ. Զահուկյան, Դավթի քերականական աշխատության նորահայտ ամբողջական ձևագիր տեքստը, «Բանբեր Մատենադարանի», 1956, № 3:

¹⁶ Տե՛ս «Новый энциклопедический словарь», изд. Ф. А. Брокгауз и И. А. Эфрон, СПб, т. 3, հոդվածներ՝ «Армения», «Армянская литература», «Армянский язык»:

գիշում տոհմատիրական կառուցվածքը: Այդ շրջանում են առաջ գալիս նախարարական այն տները, որոնք հետագայում պիտի կատարեին խոշոր դեր՝ Բագրատունիները, Մամիկոնյանները, Արծրունիները: Տիգրանյան շրջանին հաջորդում է շորորոգ՝ Արշակունիների շրջանը, երբ Հայաստանը դառնում է հռոմեացիների և պարթևների կռվախնձոր: V դարում վերացվում է Արշակունյաց դինաստիան, իշխանությունը անցնում է նախարարներին: Հինգերորդ նախարարական շրջանում Հայաստանը տիպիկ ֆեոդալական երկիր է: Հենվելով իր մագիստրոսական աշխատության վրա, Աղոնցը մանրամասն բնութագրում է նախարարական Հայաստանի հասարակական և քաղաքական կառուցվածքը, նկարագրում այն պայքարը, որը մղում էին նախարարները օտար զավթիչների դեմ: Այդ պայքարը մի կողմից թուլացրեց արաբական տիրապետությունը, մյուս կողմից՝ ապահովեց Հայաստանի ազատագրումը. սկսվում է վեցերորդ շրջանը, որը Աղոնցը անվանում է մանր թագավորությունները շրջան (նկատի ունենալով Բագրատունիների, Կիլիկյան և Զաքարյանների թագավորությունները): Այնուհետև Հայաստանը նորից է կորցնում իր պետականությունը, որպես ազգային կյանքի ղեկավար, բոստ Աղոնցի, հանդես է գալիս եկեղեցին, և սկսվում է յոթերորդ՝ էջմիածնի շրջանը:

Աղոնցը երբեք մարքսիստ չի եղել, սակայն լինելով հայ բուրժուական պատմագրության խոշոր ներկայացուցիչներից մեկը, նա շատ հարցերում հաղթահարում է ավանդական կղերա-ֆեոդալական պատմագրության սկզբունքները: Այսպես, իր պերիոդիզացիայի հիմքում նա դնում է Հայաստանի, հայ ժողովրդի ներքին կյանքը. նա չի անտեսում այն դերը, որը կատարել է օտար լուծր հայոց պատմության մեջ, սակայն նրա ըմբռնմամբ բնորոշը ոչ թե օտար տիրապետությունն է, այլ այն քաղաքական, էթնիկական կառուցվածքը, որը ձևավորվում է այդ տիրապետության ներքո: Պատահական չէ, որ նա «նախարարական» շրջանում այդքան մեծ տեղ է նվիրում երկրի սոցիալական կազմակերպությանը:

Դեռևս Պետերբուրգում եղած ժամանակ Աղոնցը հրատարակության է պատրաստում մի հոդված՝ «Փալստոս Բուդանդացին որպես պատմաբան. խորագրով¹⁷»: Այդ հոդվածի հիմքում ընկած է 1906 թ. Ռուսական հնագիտական ընկերության Արևելյան բաժնում հեղինակի կարգացած զեկուցումը¹⁸: Մանրամասն վերլուծելով Փալստոսի մի շարք հատվածները, Աղոնցը ցույց է տալիս, որ Տիրան թագավորի օրոք եղած դեպքերը նկարագրելիս հեղինակը նյութը քաղել է 298 թ. պատերազմի նկարագրությունից, երբ հռոմեական կայսր Փաղերիոսը ջախջախում է Հայաստան ներխուժած պարսիկներին:

Քսանական թվականներին Աղոնցը լույս է բնծայում հայ հայսմավուրքներին, ճառրնտիրներին և ճաշոցներին նվիրված ուսումնասիրությունը¹⁹: Քրննության առնելով շուրջ 30 ձեռագիր, հեղինակը գալիս է այն եզրակացության, որ հին Հայաստանում կիրառվել են տոմարական երեք հաշվումներ՝ տոնական, հայադիր և հռոմադիր, որոնք զրված են համապատասխան սրբաբանա-

¹⁷ Н. Адонц, Фауст Византийский как историк, ХВ, 1922, VI, էջ 235—273 (անսովորա):

¹⁸ ЗВО, т. XVII, 1906, էջ XLII—XLIII.

¹⁹ „Note sur les synaxaires arméniens“, ROC, XXV, 1924, էջ 211—218, „Les fêtes et les saints de l'Eglise Arménienne“, ibid., XXVI, 1927—1928, էջ 74—104, 225—278 (անսովորա):

կան ժողովածուների հիմքում: Նա մանրամասն վերլուծության է ենթարկում հայոց եկեղեցական տոների սխեմեր և կարևոր նշումներ է անում մատենագիտական սկզբնաղբյուրների վերաբերյալ: Դժբախտաբար, երկրորդ աշխատությունը յույս է բնծայվել անավարտ վիճակում, ուստի հեղինակի մտահղացման մասին լրիվ պատկերացում չի տալիս:

Այդ շրջանի լավագույն և կարևորագույն աշխատությունը Մեսրոպ Մաշտոցին և նրա աշակերտներին նվիրված ուսումնասիրությունն է²⁰: Օգտագործելով բազմաթիվ հույն-լատինական աղբյուրներ, Աղոնցը ներկայացնում է դադափարական այն միջավայրը, որտեղ գործել են Մաշտոցը, Սահակը և նրանց հետևորդները: Հեղինակի կարծիքով, հայոց սկզբնաղբյուրները, հատկապես Կորյունը, դիտակցորեն լուրջ են հանձարեղ դիտականի կենսագրական որոշ փաստերի մասին. Մաշտոցը կապված է եղել մի շարք անձնավորությունների հետ, որոնք հետագայում ճանաչվել են հերետիկոսներ. ահա այդ հանգամանքը մատենագիրները ձգտում են թաքցնել: Միաժամանակ Աղոնցը առաջ է քաշում մի հիպոթեզ, որի համաձայն գրերի գլուխը կատարվել է 383—392 թթ. միջև: Փոտ պատրիարքի հռչակավոր «Գրադարանում» տեղեկություն է պահպանվել, որ հայտնի հերձվածող Թեոդորոս Մուսսուկեստացին, երեց եղած ժամանակ, մի գիրք է ձեռնում կամ ուղղում «հայ քորեպիսկոպոս» Մաշտոցին: Աղոնցը պնդում է, որ այդ անվան տակ հիշատակվում է Մաշտոցը: Քանի որ Թեոդորոսը երեց է եղել 383—392 թթ., ապա այդ ժամանակաշրջանում էլ Մաշտոցը դարձել էր քորեպիսկոպոս և հորինել հայոց նշանադրերը: Հետագայում ակադ. Հ. Մանանդյանը, ելնելով բոլորովին այլ փաստերից, նույնպես եկավ այն եզրակացության, որ հայ գրերի գլուխը տեղի է ունեցել 392 թ.²¹: Աղոնցի մենագրությունը զգալիորեն յայնացնում է մեր պատկերացումները այն պայմանների և միջոցների մասին, որտեղ գործել է հայոց վաղ միջնադարի խոշորագույն դիտականը:

Աղոնցի կարևոր գործերի շարքին են պատկանում նաև Եղնիկ Կողբացու նվիրված հոդվածները: Եղնիկի մասին իր քննական նշմարներում²², որոնք գրված են Լ. Մարիեսի «Le De Deo d'Eznik de Kolb connu sous le nom de „Contre des sectes“» ուսումնասիրության կապակցությամբ, հեղինակը նշում է, որ Եղնիկի ժամանակը այնքան էլ պարզ չէ և նրան Արտաշատի ժողովի մասնակից Բագրեանդի եպիսկոպոսի հետ նույնացնելը սխալ է: Եղնիկի աշխատությունը հասել է մեզ անվերնադիր, Աղոնցի կարծիքով այդ աշխատությունը հավանաբար կրել է «Ճառք յանդիմանութեան» խորագիրը: Նրա առաջին գիրքը բաղկացած է երկու տարբեր տարրերից՝ հիմնական կամ թարգմանածո բնագիր (Ա—ԺԴ գլուխներ) և երկրորդական կամ թարմատառ հավելում (ԺԵ—ԻԷ գլուխներ): Երկրորդ գիրքը ևս ունի հիմնական մաս և հավելում: Այն գլուխները, ուր քննվում է պարսից թեզը, պատկանում են հիմնական մասին, ապա գալիս է մի հավելված, ուր Եղնիկը խոսում է ժողովրդա-

²⁰ «Անձանոթ էջեր Մաշտոցի և նրա աշակերտների կյանքից, ըստ օտար աղբյուրների», ՀԱ, 1925, № 39, էջ 193—202, 321—328, 435—441, 531—539: Արտատպված է՝ «Մաշտոց և նրա աշակերտները ըստ օտար աղբյուրների», Վիեննա, 1925 (Ազգային մատենադարան, ՃԺԱ):

²¹ Հ. Մանանդյան, Հայ գրերի գլխի տարեթվի հարցի շուրջը, Հայկ. ՍՍՏ ԳԱ «Տեղեկագիր», (հաս. դիտ.), 1952, № 7:

²² «Քննական նշմարներ Եղնիկի մասին» (Լ. Մարիեսի աշխատության առթիվ), «Բազմավեպ», 1925, № 82, էջ 196—200, 294—298, 366—371, 1926, № 83, էջ 69—72, 108—113:

կան հավատալիքների մասին: Երկրորդ գրքի վերջին հինգ գլուխները իսկապես պատկանում են երրորդ գրքին, ուր հերքվում են հույն իմաստունների հայացքները: Ազոնցը պարզորոշ ձևով ներկայացնում է Եզնիկի աշխատության կառուցվածքը: Մանրամասն դնելով այն աղբյուրները, որոնցից օգտվել է Եզնիկը, Ազոնցը ցույց է տալիս, որ օրիգենյան նյութերը կարող էին անցնել հեղինակին Թեոդորոս Մոպսուեստացու միջնորդությամբ:

Այս բոլորի հետ միասին Ազոնցը հրատարակության է հանձնում սույն հարցին նվիրված մի մեծ հոդված²⁵, հրապարակում է Գալուստ Տեր-Մկրտչյանից ստացած մի գրական հուշարձան՝ «Կանոն Սրբոյն Գրիգորի Պարթևի. դարձնալ հարցումն և պատասխանիք նորա»: Մշակելով Բ. Տեր-Մկրտչյանի գրչագիր մատյանից արտագրված տարբերակը, ինչպես նաև երկու այլ մատյանների տարբերությունները, բաղդատելով այդ բոլորը մի այլ ձևադրի: հետ, նա կազմում է այդ աշխատության քննական համեմատական բնագիրը: Դա մի դավանաբանական աշխատություն է, որից օգտվել է Եզնիկ Կողբացին: Ազոնցը կրկին անգամ ցույց է տալիս, որ Եզնիկի աշխատությունը բաղկացած է երկու շերտից՝ հիմնական և օժանդակ. այդ երկրորդում է ահա, որ Եզնիկը օգտագործել է նշված բնագիրը, որը հանդիպում է մի շարք կանոնգրքերում: Երկու տարի հետո Ազոնցը նորից է անդրադառնում այդ խնդրին՝ իսկ վերջին անգամ Եզնիկի հետ կապված հարցերին գիմել է 1938 թ.: նա ուսումնասիրում և հրատարակում է «Նշանագիր կարգաց բանից» վավերագիրը՝ վերցված Փարիզի Ազգային գրադարանի № 112 (51) ձևագրից և հերքում ն. Ակինյանի այն տեսակետը, թե այդ բնագրի էական մասը պատկանում է Եզնիկ Կողբացու գրչին: Բանասիրական քննությամբ Ազոնցը ցույց է տալիս, որ այդ երկի հեղինակ Եզնիկ Երեցը ապրել է Մ11 դարում, Կոմիտասի կաթողիկոսի օրոք, և ականատես է եղել 618 թ. դեպքերին:

Շարունակելով իր աղբյուրագիտական պրպտումները, Ազոնցը այդ տարիներին գրում է երկու հոդված Կորյունի մասին²⁶, լույս է բնծայում վերևում հիշատակված ուսումնասիրությունը հայ շինական դասի վերաբերյալ, հրապարակում է ուսումնասիրությունը՝ նվիրված Բագրատունյաց ծննդաբանությունը²⁷:

Ազոնցի պատմահայեցողությունը հասկանալու համար մեծ կարևորություն ունի նրա «Քաղաքական հոսանքները հին Հայաստանում»²⁸ հոդվածը: Հեղի-

²⁵ «Le questionnaire de Saint Gregoire l'Illuminateur et ses rapports avec Eznik», ROC, V, 1925—1926, էջ 309—357:

²⁴ «Գրիգոր Պարթևի հարցարանը և եզնիկ», «Հայրենիք», 1928, № 6, թ. 7, էջ 72—81:

²⁵ «Նշանագիր կարգաց բանից եզնկայ երիցու», «Սիրոն», 1938, № 12, էջ 147—153, 180—185: Այդ բնագիրը առաջին անգամ հրատարակել է ն. Ակինյանը, ՀԱ, 1927, № 51, էջ 517—532: Ազոնցի հոդվածից հետո, որտեղ Ակինյանի տեսակետը ենթարկվել էր սուր քննադատության, վերջինս հանդես է գալիս մի նոր հոդվածով՝ «Դարձնալ նկարագիր (նշանագիր) կարգաց ի բանից եզնկայ երիցու», ՀԱ, 1938, № 52, էջ 238—259: Երկրորդ հոդվածի կապակցությամբ Ազոնցը լույս է բնծայում իր՝ «Հ. ն. Ակինյանի պատասխանին պատասխան»-ը, «Սիրոն», 1938, № 12, էջ 330—337, 381—383, 1939, № 13, էջ 10—15:

²⁶ «Կորյունի մասին» (Պ. Ֆետիսյանի նկատողությունների առթիվ), ՀԱ, 1927, № 41, էջ 273—284, 395—405: «Դարձնալ Կորյունի շուրջ», ՀԱ, 1928, № 42, էջ 76—94:

²⁷ «Բագրատունյաց փառքը», վերախմբագրված և լրացված ձևով՝ Պիտ., էջ 49—156:

²⁸ Պիտ., էջ 17—18: Լույս է տեսել նաև անգլերեն «Political Currents in Old Armenia», «Massis», 1929, N 2, Nov.—Dec.

նակր այստեղ ձգտում է ապացուցել, որ հին Հայաստանում հիմնական շարժիչ ուժը ազնվականությունն էր (The Armenian nobility, the most important leading strength of our nation). Քանի զեռ իշխանական տները գտնվում էին ծաղկման վիճակում, Հայաստանում գոյություն ունեւր քաղաքական կյանք, իսկ ազնվական տոհմերի անկումը ճանապարհ բաց արեց օտար զավթիչներին։ Ազոնցը, այսպիսով, անտեսում է ժողովրդի դերը պատմության մեջ, չկարողանալով այդ հարցում հաղթահարել բուրժուական պատմագրության հատուկ սահմանափակությունը։ Վերջին հանգամանքը թույլ չտվեց նրան բմբոնելու նաև դասակարգային պայքարի գաղափարը։ Այսպես, դիմելով պավլիկյան շարժման հարցերին²⁹, նա բոլորովին չի հետաքրքրվում այդ հուժկու գյուղացիական պայքարի դասակարգային էությունը, այլ ձգտում է միայն ապացույցել այդ շարժման ղեկավարների հայկական ծագումը։

Քսանական թվականների վերջերին Ազոնցը հրապարակում է հոդվածների մի շարք՝ նվիրված Բյուզանդիայի քաղաքական և ոսղմական հայազգի գործիչներին։ Ի մի բերելով հույն պատմիչների կցկտուր տեղեկությունները, Ազոնցը վերարտադրում է VI դ. բյուզանդական պորավար Արտավան Արշակունու³⁰, կայսրուհի Թեոդորայի³¹, նրա եղբայր Վարդ Սամիկոնյանի, Վասիլ Ա կայսեր³², մի շարք հայազգի գիտնականների³³ կենդանի պատկերները։ Նման հարցեր են շոշափված նաև «Բյուզանդական էպոսի պատմական հիմքերը» ուսումնասիրության մեջ և Հենրի V Հայկազնին նվիրված հոդվածում³⁴, որտեղ հեղինակը ձգտում է ապացուցել այդ կայսեր Արծրունյաց ծագումը։

Բնչ խոսք, որ այս կամ այն բյուզանդական քաղաքական գործչի հայկական ծագումը զեռ ոչնչով չի լուսաբանում հայ-բյուզանդական հարաբերությունների էությունը։ Սակայն երբ հեղինակը ապացուցում է, որ բյուզանդական արքունիքի բաղմաթիվ բարձր պաշտոնյաները հայ նախարարական տոհմերի հաջորդներն են, երբ նա ցույց է տալիս այն զավառները, որտեղ ծնվել են նրանց հայրերը կամ պապերը, մենք տեսնում ենք, որ ուսումնասիրության առարկան ոչ թե այս կամ այն պատմական դեմքի կենսագրությունն է, այլ մի հատուկ պատմական երևույթ։ Ազոնցը փաստորեն ցույց է տալիս նախաբարական տների արտագաղթի եթերորդ փուլը, երբ, լքելով հայրենիքը, հայ ազատանին ապաստան է գտնում բյուզանդական զահի շուրջը և փոխելով դավանանքը, դառնում բյուզանդական վերնախավի կարևոր բաղկացուցիչ տարրը։ Այսպիսով նա կարողանում է երևան հանել պատմական մի երևույթ, որը հավասար չափով կարևոր է Հայաստանի ու Բյուզանդիայի արտաքին հարաբերությունները և ներքին կյանքը ուսումնասիրելու համար։

1933—1934 թթ. լույս է տեսնում Ազոնցի ուսումնասիրությունը Վասիլ Ա կայսեր (867—886) տարիքի և ծագման մասին³⁵։ Ի մի բերելով աղբյուրների

²⁹ Տե՛ս նրա «Les fonds historiques de l'épopée byzantine Digenis Akritas», «Byzantische Zeitschrift» XXIX, 1929—1930, s. 198—227 հոդվածը, հատկապես առաջին էջերը։

³⁰ «Արտավան Արշակունի», ՊՈւ, էջ 297—299։

³¹ «Սամիկոնյան իշխանուհին բյուզանդական զահի վրա», ՊՈւ, էջ 354—451։

³² «Վասիլ Հայկազն», ՊՈւ, էջ 452—590։

³³ «Հայերը բյուզանդական գիտության մեջ», ՊՈւ, էջ 501—537։

³⁴ «Sur l'origine de Leon V, empereur de Byzance», «Armeniaca», II, 1927, էջ 1—10։

³⁵ «L'age et l'origine de Basile I», «Byzantion», VIII, 1933, 2, էջ 475—550, IX, 1934, 1, էջ 223—260։ Այս աշխատության առաջին հայերեն տարբերակը հիշեցինք վերևում։

հակասական տվյալները, Աղոնցը ցույց է տալիս, որ Վասիլ կայսրը ծագումով հայ է, ծնվել է Ադրիանապոլսի շրջակայքում բնակվող մի հայ ընտանիքում: Հեղինակը մանրամասն ուսումնասիրում է Վասիլ կայսեր կենսագրությունը, անջատում է պատմականը առասպելականից և շարագրությունը հասցնում մինչև այն օրը, երբ հայ զինվորների օգնությամբ Վասիլը սպանում է Միքայել Գ-ին և դառնում Բյուզանդիայի միահեծան տիրակալը: Երբ նախկին արքունական ախոռապետը դա՛ է բարձրանում, Կոստանդնուպոլսի պատրիարք Փոտր հայտարարում է, որ Վասիլը ծագումով պատկանում է հայ Արշակունյաց թագավորական տոհմին: Կտրականապես մերժելով այդ ծննդաբանությունը, Աղոնցը միաժամանակ ցույց է տալիս, թե ինչպիսի պայմաններում կարող էր ծնվել նման տեսություն: Փոտի տեսության դրական ակունքը հանրահայտ «Սահակ Պարթևի տեսիլքն» է, որը հասել է մեզ Ղազար Փարպեցու Պատմության մեջ: Բյուզանդացի քաղաքագետի կարծիքով Սահակի այն կանխասացությունը, թե Արշակունի տոհմը նորից կստանա իր գահը, վերաբերում է հենց Վասիլ Մակեդոնացուն: Աղոնցը ենթադրում է, որ «Տեսիլք»-ը թարգմանություն է, որի հունարեն սկզբնաղբրը խմբագրվել է Կոստանդնուպոլսում՝ Վասիլի դա՛ բարձրանալու կապակցությամբ: Վասիլը հայ էր ազգությամբ, և այդ հանգամանքը ընդունելի դարձրեց Փոտի տեսությունը³⁶: Այս աշխատության մեջ Աղոնցը ցույց է տալիս այն դերը, որ Բյուզանդիայի քաղաքական կյանքում կատարում էին հայրենիքը լքած հայ նախարարները՝ Մամիկոնյանները, Կամսարականները, Բագրատունիները, Արծրունիները:

Հայ-բյուզանդական ընտանիքներին է նվիրված Աղոնցի մի այլ աշխատությունը³⁷: Փոքրիկ ուսումնասիրությունների այդ շարքում նա լուսաբանում է հայ-բյուզանդական ֆեոդալական տոհմերի ծննդաբանությունը, վերականգնում տոհմային պատմությունը:

Իրենական թվականներին Աղոնցը հրապարակում է հայ-բյուզանդական հարաբերություններին նվիրված իր լավագույն աշխատություններից մեկը՝ «Տարոնացիները Հայաստանում և Բյուզանդիայում»³⁸: Կոստանդինոս Միրանածսի «De administrando imperio» կոչված աշխատության 43-րդ և 44-րդ դրուխները նվիրված են Հայաստանին, հատկապես Տարոն գավառին³⁹: Բյուզանդական կայսրը կարևոր տեղեկություններ է հաղորդում Տարոնի՝ X դարի առաջին կեսի, այսինքն՝ Բյուզանդիայի կողմից գրավվելու նախօրեի վիճակի մասին: Աղոնցը սկզբնաղբյուրի յուրաքանչյուր տողը ենթարկել է մանրամասն վերլուծության, ամեն մի անվան մասին հավաքելով բոլոր այն տեղեկությունները, որ հաղորդում են բյուզանդական և արևելյան աղբյուրները: Նրան հաջողվում է վերականգնել տարոնացիների և թոռնիկյանների ծննդաբանու-

³⁶ Վերջերս հայտնաբերվել է «Տեսիլքի» հունարեն տարբերակը՝ G. Garitte, La vision de S. Sahak en grec., „Le Museon“, LXXI, 1958. № 3—4: Գարիտի կարծիքով թարգմանությունը կատարվել է հայերենից:

³⁷ „Notes armeno-byzantines“, „Byzantion“, IX, 1934, 2, էջ 367—382, X, 1935, 1, էջ 161—205:

³⁸ „Les Taronites en Arménie et a Byzance“, „Byzantion“, IX, 1934, 2, էջ 715—738, X, 1935, 2, էջ 331, 2, էջ 531—551, XI, 1936, 1, էջ 24—42:

³⁹ Այդ աշխատության նորագույն հրատարակությունը՝ Constantine Porphyrogenitus, De administrando imperio. Greek Text Edited by Gy. Moravcsik, English Translation by R.Y.H. Jenkins, Budapest, 1949.

թյունը, ցույց տալ այդ տոհմին պատկանող բազմաթիվ հայտնի անձնավորությունների դերը Բյուզանդիայի և Հայաստանի քաղաքական կյանքում⁴⁰։ Հատկապես կարևոր են այն մասերը, որտեղ Աղոնցը խոսում է Տարոնի զրավման (966) մասին։ Պարզվում է, որ հայ իշխանները հարցը լուծված չէին համարում և դեռ X դարի վերջին ըմբոստանում էին Բյուզանդիայի դեմ։

1934 թվականից Աղոնցը իր հոգվածները հրապարակում է նաև Բրյունելի համալսարանի պարբերականում։ Նա փորձում է լուսարանել Մորիկ կայսեր (582—602) ծագումը⁴¹։ Ըստ հայ հեղինակների, Մորիկը ծնվել է Օշականում կամ Տարոնում։ Աղոնցը գտնում է, որ հայկական ավանդության համաձայն տարոնացի էր Վասիլ Ա կայսրը, և այդ առասպելը տարածվել է նաև Մորիկի վրա։ Իրականում Մորիկի ծնողները Օշականից են տեղափոխվել Բյուզանդական Արարիսոս քաղաք⁴²։ Հոգվածի երկրորդ մասում Աղոնցը քննության է առնում Կիրակոս Գանձակեցու տեղեկությունները Կոստանդին V կայսեր մահանվան մասին⁴³։

Հաջորդ տարի լույս է տեսնում Աղոնցի մի այլ ուսումնասիրություն՝ նվիրված Աշոտ Երկաթի մասին հույն և հայոց աղբյուրների համատեղ ուսումնասիրությանը⁴⁴։ Շարունակելով հայերեն և հունարեն բնագրերի զուգահեռ հետազոտությունը, Աղոնցը Հ. Գրեղուարի հետ միասին լույս է բնծայում մի աշխատություն, որտեղ ցույց է տրվում, որ հունարեն շատ հաճախակի միջնադարյան լեզուները ծագում են հայերեն տեանակ<տեստնակ բառից և նշանակում են զինվորական հետախույզ⁴⁵։

Աղոնցը շարունակում է աշխատակցել նաև հայ գիտական մամուլում։ Նա հրապարակում է մի բանի գրախոսականներ։ Սիրարիի Տեր-Ներսեսյանի «The Date of the Initial Miniatures of the Etchmiadzin Gospel» մենագրության կապակցությամբ⁴⁶ փորձ է կատարում ցույց տալ, որ Մլքե թագուհու ավետարանը ընդօրինակվել է ոչ թե 902, այլ 862 թ.։ «Սիրոնում» Աղոնցը գետնից է մի փոքրիկ ակնարկ, ուր ցույց է տալիս, որ ՄԼԾ Սոկրատ կոչված տարբերակը թարգմանված է Կոստանդնուպոլսում 696 թ. Փիլոնի կողմից, իսկ Փոքրը խմբագրված է ՄԼԾից՝ ԺԲ դարում⁴⁷։ Աղոնցը անդրադարձել է նաև

⁴⁰ Տարոնացիների և թոնիկյանների պատմությանը Աղոնցը անդրադառնում է նաև այլ հոգվածներում՝ «L'archeveque Theophy lacte et le Taronite», «Byzantion», XI, 1936, 2, էջ 577—588; Tornik le Moine, ibid., XIII, 1938, 1, էջ 143—164; «Notes sur le livre de Ceremonies», ibid., XIV, 1939, 2, էջ 387—406 (հատկապես 399—406 էջերը)։ «Observations sur la genealogie des Taronites», Reponse au R. P. V. Laurent, ibid., էջ 407—413։

⁴¹ «Les legendes de Maurice et de Constantin V, empereurs de Byzance», Annuaire, II, 1934, էջ 1—12։

⁴² Այլ լուծում է տալիս այդ պրոբլեմին Պ. Գուրերը, Maurice et l'Arménie. Note sur le lieu d'origine et la famille de l'empereur Maurice, «Echos d'Orient», XXXIX, 1941—1942, շարադրված է Օ. ՍԼԵՐՈՎՅԱՆԻ կողմից, ՀՈ, 1947, էջ 237—244։

⁴³ Հմմտ. R. Goossens-ի նոթը «Byzantion»-ում, IX, 1934, № 1, էջ 119—120։

⁴⁴ «Asot Erkat», Annuaire, III, 1935, էջ 13—35։

⁴⁵ H. Gregoire et N. Adontz, Aux confins militaires de l'Orient byzantin: Hussards, Trabans, Tasnaks, «Byzantion», XIII, 1938, 1, էջ 279—282։

⁴⁶ «Փղոսկրյա Ավետարանի արվեստը», «Սիրոն», 1936, № 10, էջ 273—274։ «Մլքեի ավետարանի գրության տարին», նույն տեղում, էջ 274—275։

⁴⁷ «Փոքր Սոկրատի հեղինակը», «Սիրոն», 1936, № 10, էջ 300—304։

Մովսես Խորենացու պրոբլեմին: Ադոնցի հրապարակած վերջին գործն է «Սամուել Հայագն, Բուլղարաց թագավոր» ուսումնասիրությունը⁴⁸: Այստեղ նա պույց է տալիս, որ բուլղարների թագավոր Սամուելը ծագումով հայ էր, և Ասողիկի տեղեկությունները «կոմսաձագերի» (κομσαδογενος) մասին համամասպատասխանում են պատմական իրականությանը:

Ադոնցի գիտական հակումները կապված էին գլխավորապես հայ միջնադարի պատմության հետ, սակայն նրա հետաքրքրության սահմաններից դուրս չի մնացել նաև հնագույն շրջանը: Նա լուսաբանել է հնից եկող աշխարհայացքն ու պաշտամունքները⁴⁹, կատարել է հայերեն մի շարք բառերի ստուգաբանությունը⁵⁰, երկար տարիներ աշխատել է մի ընդհանրացնող ուսումնասիրության վրա, որտեղ շարադրում է հայոց պատմության հնագույն շրջանը (X—VI դ. մ. թ. ա.)⁵¹: Այդ գործը լույս տեսավ հեղինակի մահից հետո՝ 1946 թ. և կազմում է Ադոնցի ծրագրած հայոց ընդհանուր պատմության առաջին մասը:

Նիկողայոս Ադոնցի գիտական ժառանգությունը հարուստ է ու բազմակողմանի: Նրա աշխատությունները նվիրված են հայոց պատմությանը, հայ-բյուզանդական հարաբերություններին, հայ և հայ-հունական բանասիրությանը, առասպելաբանությանը, լեզվաբանությանը: Այդ ասպարեզներից յուրաքանչյուրում նա ասել է իր խոսքը, սակայն գիտության մեջ Ադոնցի կատարած դերը բնորոշվում է նախ և առաջ «Հայաստանի Հուստինիանոսի դարաշրջանում» աշխատությամբ: Այդ գործը հանդիսացել է առաջին փորձը՝ բնութագրելու և վերլուծելու հայ ֆեոդալիզմի հատկանշական կողմերը: Պատկերելով Հայաստանի՝ եթե ոչ դասակարգային, ապա քաղաքական կառուցվածքը, Ադոնցը բազմաթիվ նորություններ հաղորդեց Հայաստանի հասարակական յարմիրը կազմող քաղաքական տարրերի մասին: Այդ աշխատությունը XX դարի հայագիտության խոշոր նվաճումներից մեկն է:

Ադոնցը հանդես է եկել այն ժամանակ, երբ հայագիտությունը արդեն դուրս էր եկել նկարագրության շրջանակներից և զարգանում էր պատմական փաստերի վերլուծության ուղղությամբ: Այդ տեսակետից Ադոնցը օժտված էր մեծ ընդունակությամբ, նա կարողանում էր թափանցել փաստերի ու երևույթների մեջ, յուրովի բացահայտել նրանց կապերը: Կռահելով այս կամ այն կապը, նա ձգտում էր ներգրավել եղած բոլոր տեղեկությունները և այդ երևույթի տեսանկյունից դիտել ողջ էպոխան: Ադոնցը, սակայն, չկարողացավ դուրս գալ իդեալիստական պատմագրության սահմաններից. դասակարգային սլայքարը, որպես պատմության հիմնական շարժիչ գործոն, անհասկանալի մնաց նրան:

⁴⁸ „Samuel l'Armenien, roi des Bulgares“, „Memoire de la classe des lettres de l'Academie Royale de Belgique“, 2 serie, XXXIX 1938.

⁴⁹ «Հին հայոց աշխարհայացքը», ՊՈԼ, էջ 223—296, «Տորք աստված հին հայոց», «Հուշարձան», Վիեննա, 1911, էջ 389—394, ապա՝ „Les vestiges d'un ancien colte en Armenie“, Annuaire, IV, 1936, էջ 501—515.

⁵⁰ „Quelques etymologies armeniennes“, Annuaire, V, 1937, էջ 5—12: Emprunts de haute epoque en armenien. Revue des Etudes indo-europeennes, I, 1938, էջ 157—167:

⁵¹ „Histoire d'Armenie. Des origines du Xe siecle au VIe Publication de l'Union Generale armenienne de bien faisance“, Paris, 1946.

НАУЧНОЕ НАСЛЕДИЕ НИКОЛАЯ АДОНЦА

К. Н. ЮЗБАШЯН (Ленинград)

(Р е з ю м е)

Николай Георгиевич Адонц (1871—1942) — один из крупных представителей армянской буржуазной историографии и византиноведения XX в. Его работы охватывают широкий круг проблем истории Армении, армяно-византийских отношений, армянской и греко-армянской филологии, мифологии, языкознания. Магистерская диссертация Н. Г. Адонца «Армения в эпоху Юстиниана» явилась его наиболее значительным трудом в изучении социально-экономических отношений в Армении того времени. Справедливо признав нахарарский строй местной разновидностью феодализма, Адонц многосторонне исследовал его существенные черты, чем и способствовал формированию научной концепции армянского феодализма. Докторская диссертация Адонца «Дионисий Фракийский и армянские толкователи» остается одним из ценных трудов по греко-армянской филологии. В целом ряде других работ Николая Адонца поставлены и решены многие важные проблемы армяно-византийских отношений.

ՀԱՄԱՐՈՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱ — Հանդես Ամսոյա:

ՊՈ — Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրութիւններ. Փարիզ, 1948:

ВВ — Византийский временник.

ГИАЛО — Государственный исторический архив Ленинградской области.

ЖМНП — Журнал министерства народного просвещения.

ЗВО — Записки Восточного Отделения Императорского русского археологического общества.

ХВ — Христианский Восток.

Annuaire — Annuaire de l'Institut de Philologie et d'Histoire Orientales et Slaves.

REA — Revue des Etudes Armeniennes.

ROC — Revue de l'Orient Chretien.